

ՀՐԱԺԵՇՏ՝ ԱՆԱՀԻՏ ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆԻՆ

Յարութին Քիրքճեան

Անկարելի կը թուի ինծի հիմա, ժլատ բառերու ուրուագծումով մը, ընդգրկել դեմքը եւ վաստակը Անահիտ Տէր-Մինասեանի:

Պատմագետի ակադեմական բերրի ասպարեզի մը զուգահեռ արտադրուած՝ բազմատասնեակ ուսումնասիրութիւն-յօդուածներ, յաճախ կանխաւ ներկայացուած՝ համադրական գիտաժողովներու, կամ նիւթ դարձած անձնական երկարաշունչ սեմինար-դասընթացքներու, յետագային նաեւ ամփոփուելու համար իրերայաջորդ ժողովածու-հատորներու մէջ. ապա դեռ՝ մենագրութիւն-հատորներ...: Ահա՛ դեռ շատ համառօտ ու մակերեսային բնորոշումով՝ վաստակը հայ Մփիւոքի ծնունդ եւ արեւմտեան ակադեմական աշխարհի կառկառուն դեմք Անահիտ Տէր Մինասեանի:

Ուրեմն, այս սինակին մէջ ակադեմական այս անհատականութեան եւ իր՝ աւելի քան կետարեայ գործունէութեան ու վաստակին արժեւորումը չէ որ պիտի ըլլայ. ատոր ո՛չ տեղը կը ներէ, ո՛չ ալ՝ մասամբ՝ ստորագրողին ձեռնհասութիւնը: Բայց ինչ որ կարելի է եւ անհրաժե՛շտ՝ նախ՝ նշումն է եւ շեշտումը յատկութեան մը, որուն տէր են եղած քիչեր միայն՝ արեւմտեան աշխարհի հայագգի ակադեմական անձնաւորութիւններէն.-

Գիտական կազմաւորման կողքին՝ ներիմացական, գրեթէ բնագոյային ընկալումը հայ անցեալ ու ներկայ իրականութեան: Ասիկա ոմանց կրնայ թուիլ պարզ լրացուցիչ գործօն մը, բայց կենսական է իրօք: Այս մեծ բարիքով էին օժտուած Անահիտ Տէր Մինասեանի անհատականութիւնն ու գործը: Բարիք՝ որ եթէ կրնար մասամբ գալ փաստաթուղթերու դեզերու հետ մնայուն շփումէ եւ խորամուխ ուսումնասիրութիւններէ, սակայն մանաւա՛նդ արդիւնք էր ընտանեկան աւանդական միջավայրի մը, եւ ստացական-դաստիարակչականի կողքին՝ ժառանգական բաղադրիչներու: Արդիւնք ու ներշնչում՝ ընտանեկան նահապետ-կերպարներ գրագետ Գեղամ Տէր Կարապետեանի մը, հերոսական Կիւլիզար մեծ մօր մը, ազգագրագետ մօր՝ Արմենուհի Գեւորեանի. եւ դեռ բարձրադիր հովանին Ռուբէն Տէր Մինասեանի, յեղափոխական գործիչ եւ հումերական յուշագրող:

Հեռու եմ, շա՛տ հեռու՝ մտաւորական եւ մարդ-անհատ Անահիտ Տէր Մինասեանի մասին յայտնաբերումի մը յաւակնութիւններէն: Մանաւանդ՝ որովհետեւ ան լիապէս օժտուած էր ինքնաճանաչումի, ինքնասահմանումի հազուագիւտ ատակութեամբ մը, որ այդքան ալ բնորոշ յատկութիւնը չէ տիպիկ մտաւորականներու մեծ թիւի մը մօտ: Աւելին՝ այդ ատակութիւնը Անահիտ Տէր-Մինասեանի երկար ասպարեզի վերջին տասնամեակներուն ուղղակի տիրող գիծն էր դարձած իր մտաւորական անհատականութեան:

Ուսումնասիրութիւններու «**L'Echiquier arménien entre guerres et révolutions, 1878-1920**» ժողովածուն¹, իր «Ներածութիւն» էջերուն մէջ, կատարելութեան կը հասցնէր արդէն

¹ «L'Echiquier arménien entre guerres et révolutions, 1878-1920» (Ed. Karthala, Paris, 2015).

հաստատուած այս յատկութիւններու փունջը: Կը բաւէ հակիլ պահ մը՝ այդ գրութեան վրայ՝ լայնօրէն լուսաբանուելու համար ասոնց առկայութեամբ:

Կ'արժէ մօտէն սեւեռել յատկապէս այդ «Յառաջաբան»ին երկրորդ-երրորդ մասերը. հոն՝ բացի նշուած յատկութիւններէն՝ մեզ կը դիմաւորէ Ա. Տէր Մինասեանի անհատականութեան մէկ ուրիշ, քիչ մը անսպասելի երեսը՝ հակում-փորձութիւնը *ինքնապատումի*, այնքա՛ն հետաքրքրական՝ անհատականութեան մը բացայայտումին համար:

Գիտենք, որ Ա. Տէր Մինասեան, իբր նկարագիր ու անհատականութիւն, թէև բաց ու անվերապահ՝ մտերիմ շրջանակի մը համար, իր գործերուն մէջ, հասկնալի գիտական փոյթ մղուած ու ակադեմական ոճով զսպուած, չէր խօսեր իր մասին: Չէր խօսած ա՛յդ տարողութեամբ, չէր լուսաւորած ու լուսաբանած՝ իր գործին եւ անհատականութեան ծալքերը, ընտանիքի, աճման ու կազմաւորման միջավայրը:

Այս ինքնապատումը սակայն զգօն է եւ խորհրդապահ, հեռու ամէն եսակեդրոնութենէ, ինքնացուցանքէ: Ջայն ստորագրողը հիանալի յաջողած է ընթերցողը համակել մտերմիկ բայց զուսպ տրամադրութեամբ մը, գտնելով յարմարագոյն, մարդկայնագոյն, գրեթէ անանձնական շեշտերը՝ իր անձն ու հոգեմտաւոր աշխարհը պարզելու համար:

Այս բոլորը յաւելեալ շահեկանութեամբ կ'օժտեն իր վկայութիւնը, որ ահա՛ թարգմանովի.-

«Այս գիրքին այլազան թեմաները կը համապատասխանեն պատմագէտի իմ ուղեծիրս հանգրուանած համալսարանական իրադարձութիւններու: Յանձնառու պատմագէտի ուղեծիր՝ որ սկիզբ առած է Փարիզի 19րդ քաղաքամասի Տէ Պուա փողոցի նախակրթարանէն, Պելվիլէն Փրէ-Մէն-Տերվէ տարածուող ժողովրդական, կենսայի թաղի մը կեդրոնին, գրաւուած՝ յոյն, հրեայ, հայ, իտալացի, սպանացի գաղթականներու խումներամ բնակչութեամբ: Թաղի կեդրոնական «Տօներու Հրապարակ»ը յիշատակներուս մէջ իսկապէս արժանի կը մնայ իր անունին: Դպրոցիս 1930ական տարիներու վարժուհիներուն կը պարտիմ անբարդոյթ սէրը պատմութեան, Ֆրանսայի եւ Հանրապետութեան պատմութեան, ինչպէս եւ դաւանանքը՝ որ ազատութիւնը գերագոյն բարիք է, որուն կը ձգտին մարդիկ: Բայց նաեւ՝ որ այդ ազատութիւնը տուեալ մը չէ, կը նուաճուի պայքարով: Ճշմարտութիւն՝ որ կը շեշտուէր պատմութեան դասագիրքի նկարագարողումով: Հերոսական դիրքերու մէջ՝ մարդիկ (եւ նոյնիսկ դեռատի աղջիկ՝ կ'մը...), Վերսենժեթորիքսէն մինչեւ Ֆիլիպի Օկիւսթ եւ Տիւ Կըքլէն ու Շանն տ'Արք, պատերազմած էին եւ ներխուժողներ վտարած՝ Ֆրանսայէն...: Ինչ որ կը հաստատէին դեռ գիրքի վերջին մասի նկարները՝ Ա. Աշխարհամարտի խրամներու եւ գոհուող ֆրանսացի զինուորներու: Նկարներ՝ որոնք կը ներդաշնակուէին առօրեայ փորձառութեամբը աղջնակի մը, որուն միակ խաղափայրը փողոցն էր. նաեւ հոն՝ քիչ մը սարսափեցնող ներկայութիւնը այդ Աշխարհամարտի հաշմանդամներուն: Այսպէս, շատ կանուխէն մէջս տեղ է ըրեր՝ «ազատութեան հողային սկզբունք» մը. պարտաւորութիւնը՝ մարդոց վրայ դրուած՝ պաշտպանելու իրենց հողը, հայրենիքը, «մեռնելու հայրենիքին համար»: Արդ այդ չէ՞ր որ կը հրահանգէր «Մարսէլէզ»ը, որ մենք՝ աշակերտներ, բարձրագոյն կ'երգէինք դպրոցական տարեշրջանի փակման օրը...»

« Բայց պատմության դասագիրքը ուներ նաև ազատության ուրիշ սկզբունք մը, շատ աւելի վերացական: Ազատութիւնը՝ իբր հաստատում Մարդու իրաւունքներու: Եզրաբանութիւն մը, որ անշուշտ մատչելի չէր ինծի, բայց կը ներկայացուէր՝ Պատիւի գրաւումը, Ժէօ տը Փօմի Ուխտը, Մարդու եւ Քաղաքացիի Իրաւունքներու Յայտարարութիւնը եւ նման իրադարձութիւններ ոգեկոչող պատկերներով: Այս մէկ ազատութիւնը ուրեմն կը մնար աւելի դժուարահասկնալի, նոյնիսկ եթէ ցուցադրուած էր դպրոցի ճակատին՝ Հաւասարութեան եւ Եղբայրութեան նշումներով: [...] Տարիներ պէտք եղան՝ որ ճիշդ ընկալեմ [Ֆրանսական յեղափոխութեան] 20 սեպտ. 1792ի՝ Վալմիի « Կեցցէ Ազգը» աղաղակները. թէ՛ անոնք քաղաքացիակա ն համայնքի մը կը յղուէին, եւ ո՛չ էթնոսազգի՝ մշակութային եւ կրօնական բաղադրիչներով (ինչպէս պիտի ընկալուէին Պալքաններու կամ Միջին Արեւելքի մէջ, կամ իմ ընտանիքիս մեծերուն մօտ):

« Ծներ եմ Ֆրանսա՝ գաղթական ծնողներէ, եւ մինչեւ իրենց մահը՝ հայրս ու մայրս պահեր են իրենց « հայ գաղթական» ի կարգավիճակը, ստեղծուած ֆրիտ. Նանսէնի կողմէ եւ հաստատուած ու շնորհուած՝ Ազգերու Ընկերակցութենէն: Անոնք կու գային հեռուներէն՝ Օսմանեան կայսրութենէն, ու աւելի ճշգրիտ՝ Ասիական Թուրքիայէն, ինչպէս կ'ըսուէր 1914էն առաջ: Բախտի կամ հրաշքի բերմամբ՝ փրկուէր էին հայոց 1915ի Յեղասպանութենէն, նոյնիսկ եթէ իրենց զոյգ ընտանիքները մեծ մասով բնաջնջուէր էին՝ Մուշ եւ Սվազ (Սեբաստիա): Տան մէջ, ցեղասպանութիւնը (այն ատեն կը գործածուէր « ջարդեր» արտայայտութիւնը) երեխաներէն պահուող թապու նիւթ մը չէր բնաւ: Հոգեխոցի գաղափարն ու բառը... տակաւին չէին հնարուած մանկա-հոգեբուժներուն կողմէ կամ պարզապէս տեղ չունէին մեր մօտ: Ընդհակառակը, ցեղասպանութիւնը նիւթ էր գրեթէ ամէնօրեայ պատումի, կրկնուող ու նորոգուող: Պատում մը որ, ինչպէս հեքիաթներու մէջ, կը ճոխանար նոր մանրամասնութիւններով՝ ներկայացուած մեր մէկ կամ միւս այցելուի տեղեկութիւններուն շնորհիւ: Յիշողութիւնը, իրական կամ վերստեղծուած, այն ատեն կը բանէր անկաշկանդ, եւ կը կանգնէր պատնէշի պէս՝ ընդդէմ պատմութեան ուրացողներուն:

« Երկար ատեն, ծնողներս ընդունէր են այցելութիւնները կնոջ մը՝ Տիկին Մարիի: Սեւազգեստ, գլուխը միշտ քօղով մը ծածկած, ան կը մտնէր մեր տունը, կը նստէր եւ կը մնար ուղղաձիգ մարմինով՝ աթոռին եզերքին: Ինծի կը թուէր շատ ծեր, ինչ որ իրականութիւն չէր հաւանօրէն: Կը մնար լուռ: Ինծի պատուիրուած էր իր ներկայութեան հանդարտ կենալ, չաղմկել, քանի որ ան շատ ծանր դժբախտութիւններ էր ճանչցած. իր տունէն վտարուած՝ տարագրուէր էր ընտանիքով հանդերձ: Նախ անհետ կորէր էր ամուսինը, իսկ ինք՝ ութ երեխաներուն հետ՝ անապատի մէջ քալէր էր օրեր եւ օրեր: Այս պատմութիւնը, որ միտքիս մէջ կը կապուէր Պզտիկ Բթամատի իմ պատկերագարող գրքոյկիս պատմութեան, բոլորովին տարբեր վախճան մը ուներ սակայն. երեխաները մեռեր էին իրար ետեւէ, ու վերջինը՝ հագի հասած Հալէպ, ապաստան քաղաք՝ որուն անունը շուտով արձանագրուէր էր յիշողութեանս մէջ: Ինք միայն՝ մնացեր էր կենդանի: Հիմա դարձած էր կարուհի: (Արհեստը ինծի ծանօթ էր, որովհետեւ թաղին մէջ անով կ'ապրէին մեծ թիւ մը հայուհիներ, իրենց կարի « Սինկէր» մեքենաներուն վրայ հակած օրն ի բուն): Կ'ապրէր մինակ, Նէոյի, Երդ յարկի սպասուհիի սենեակի մը մէջ: Չէր գանգատեր, բան չէր ըսէր իր կեանքի չարաշուք թուարանութեան մասին: Չանձրալի անձ մըն էր: Ուրիշ պատումներ ինծի աւելի յուզումնալի կը թուէին: Չէ՞ որ, խուսափելու համար « քիւրտերէն եւ անպատմութենէն», հայ մայրեր իրենց երեխաներով Եփրատ գետն էին

նետուած...: Այսպէս, աղջնակը՝ որ էի, սկսեր է ըմբոստանալով, ապա հասկցեր է, որ կարելի է վերապրիլ ամէն աղէտի: Եւ որ ատիկա կը կոչուի քաջութիւն:

«Տունը իմ լսած բոլոր պատմութիւններէս (եւ մայրս անխոնջ պատմող մըն էր), իմ նախընտրածներս անոնք էին, որ կը վերաբերէին դիմադրութեան հերոսական կոչիւններու, նման՝ Պելլիլ փողոցի «Ֆէրիք Փաթէ» շարժանկարի սրահին մէջ տեսած «քաուպոյսական» ժապաւէններու: Այդ պատմութիւնները կ'աւանդէին դիւցազնավէպը ֆետայիներու՝ փամփշտակալ գօտիներով բեռնաւոր առասպելական անձնաւորութիւններ (իրենց նկարները կային մեր հայերէն գիրքերուն մէջ), որոնք կոուած էին թուրք բանակին դէմ, քիւրտ ցեղախումբերու դէմ՝ դիմագրաւելով անասելի վտանգներ: Ֆրանսա ծնող հայ տղոց կը տրուէին անոնց անունները՝ Անդրանիկ, Ռուբէն, Քրիստափոր, Իշխան, Վարդան, Բաֆֆի, - զիրենք նոյն ուժով ու քաջութեամբ օժտուած տեսնելու յոյսով: Այս պատումները, ուր տեւաբար կու գար ազատութիւն բառը, մէջս կ'արձագանգէին համահունչ՝ Ֆրանսայի պատմութեան հետ, պատմութեան դասագիրքիս դասերուն հետ...:

«Բայց եթէ ազատութիւն ու հայրենիք կը շահուէին կոչուով, եւ եթէ հայերը կոուեր էին, ապա ուրեմն՝ ինչո՞ւ պարտուեր էին: Ինչո՞ւ կորսնցուցեր էին իրենց հայրենիքը: Ինչո՞ւ դարձած էին տարագիր: Ես ինչո՞ւ ծնած էի Փարիզ: Հաւանօրէն այս հարցումներուն պատասխանելու համար է, եւ Տիկին Մարիի լռութիւնները հասկնալու համար, - որ պիտի դառնայի պատմագետ:»

*
* * *

Մարդկային խորագգած շեշտերով օծուն այս հատուածը, որ միանգամայն կը նախագծեր Անահիտ Տէր Մինասեանի գիտա-ակադեմական հակումներն ու ասպարէզը, այնքան զուսպ ու խորհրդապահ շեշտերով, տէր է նաեւ ուրիշ շնորհի մը. կը բացայայտէ նկարագիրը յանձնառու անհատին. մեկնակէտն ու դրդիչը ո՛չ միայն մտաւորական-ակադեմական ասպարէզի մը, այլ՝ զսպանակները իր յայտնաբերած, քննարկած ճշմարտութիւնները ապրելու, կեանքի մէջ առաջամղելու լծուած անձին: Գիտական ճանաչումի կեցուածքին միշտ հաւատարիմ՝ բայց տեւաբար լծուած անով իսկ երաշխաւոր գործին ու ապրուած կեանքին, որ զինք կը տանէր պաշտպանական մէկ ատեանէն միւսը, աշխարհի մէկ ծագէն միւսը -- մինչեւ հաղորդութիւնը նախնիքներու հետաւոր ուխտավայր-հայրենիքին հետ:

Անհատին մինչեւ հեռու խորքերը լուսաւորող այս արարքը՝ «Ներածութեան» մը խոստովանութիւնը, վերը արդէն նշուած բնականութեամբ եւ պարզութեամբ նաեւ, - մտածել կու տար հասունութեան, յանգումի փուլի մը, հաշուետւութեան մը մասին: Միւս կողմէ սակայն՝ վառ ու կենդանի՝ զերծ կը մնար հաշուեփակ թելադրող ամէն նուագումէ, ընկճուածութենէ, եւ պիտի մնար այդպիսին՝ մինչեւ վերջ -- մինչեւ իր անդարձ մեկնումի պահը:

Ինծի՝ ինչպէս մտքով եւ հոգիով իրեն հարազատ բոլոր անձերու վերապրումներուն մէջ, Անահիտ պիտի մնայ անկասկած իբր կերպարը մտաւորական-ակադեմական գործիչի՝ ամբողջական առումով: Բայց անկէ անդին, մանաւանդ՝ իբր հազուագիւտ վաւերական տիպարը՝ ուրոյն մշակոյթ մը եւ անոր ներկայ թէ անցեալ ճշմարտութիւնները ներուժօրէն ապրող անհատի: